ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՍԵԴՐԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՆ

28.09.2021 20:50

Այսօր՝ 28.09.2021 թվականին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ՝ Սեդրակ Ասատրյանի հիշատակի երեկոն:

Միջոցառմանը հրավիրված էին Սեդրակ Ասատրյանի հարազատներն ու մտերիմները, ինչպես նաև փաստաբանները: Միջոցառմանը ներկա էին Սեդրակ Ասատրյանի կինը, որդին, հարազատները, ընկերներն ու ուսանողները:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել է Սեդրակ Ասատրյանի մասին պատմող «Պայքարողը» տեսաֆիլմը:

Ֆիլմից հետո, ներկաները ևս մեկ անգամ հիշել են Սեդրակ Ասատրյանի անցած ճանապարհը, վերհիշել են նրա խոսքերն ու խորհուրդները:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը միջոցառման ավարտին նշել է. «Մենք կհիշենք Սեդրակ Ասատրյանին: Փաստաբանների պալատը կենդանի օրգանիզմ է և պետք է ունենա իր հիշողությունը: Հիշողություն այն մարդկանց նկատմամբ, ովքեր դեր ունեն այս ինստիտուտի զարգացման հարցում: Յուրաքանչյուր փաստաբան մեր մի մասնիկն է և մեզ համար թանկ է: Մենք պետք է միմյանց փայփայենք, պաշտպանենք և մեկս մյուսով, միասին ուժեղ լինենք, որ կարողանանք մեր ինստիտուտը պահել և զարգացնել»:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })